Մերի Ավետիսյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
meryavetisyan1984@gmail.com

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍՔԻ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԿԵՆՍԱՓՈՒԼԱՅԻՆ ԾԵՍԵՐՈՒՄ

Բանալի բառեր. Սպասք, ծես, ծիսականացում, ավանդույթ, պատմազգագրական շրջան, արդիականացում, գդալ, կավանոթ, գործառույթ:

Հոդվածը նվիրված է Հայաստանի պատմազգագրական շրջաններում ընդունված կենցաղային սպասքի՝ ծեսերի ժամանակ կիրառման առանձնահատկություններին և ժամանակակից ծեսում սպասքի ծիսականացման երևույթի արդիականացմանը: Այդ առանձնահատկություններից որոշները պահպանվել են մինչև այսօր՝ կրելով կատարման ձևի և բովանդակայն փոփոխություններ: Ժամանակաշրջանի առումով թեմայի ուսումնասիրությունը ընդգրկում է XIX դարի կեսերից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Թեման արդիական է այնքանով, որ մերօրյա ծիսաշարերում կիրառական սպասքը շարունակվում է ծիսականացվել: Ընդգծվել է կենցաղային սպասքի կիրառական նշանակությունից անցումը ծիսական գործառույթին, այսինքն սպասքը դիտարկվել է ավանդույթը ներկայացնելու միջոց, իսկ ծեսը՝ ավանդույթի իրագործման առիթ:

XIX դարից մինչև XX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածի կենսափուլային ծեսերում սպասք կոտրելու, «գողանալու» սովորույթների տարածաշրջանային լայն տարածվածությունը թույլ է տալիս որոշակի վերապահումներով ասել, որ դրանք համահարթեցվել են և բնորոշ են գրեթե բոլոր պատմազգագրական շրջաններին: Կոտրվող սպասքի խորհուրդը մեկնաբանվել է տարբեր կերպ՝ չարխափան, բաժանումի, զոհաբերության, արգասավորության խորհրդանշային իմաստներով: Սպասք կոտրելը որպես զոհաբերություն մեկնաբանվել է դեռևս Անահիտ աստվածուհուն նվիրված ծեսերի ժամանակ, երբ զոհաբերելու համար համապատասխան կենդանիներ չունենալու դեպքում, գինին հեղելուց հետո եղջերագավաթը կոտրելու ծես է կատարվել (Խաչատրյան 2004, 43–48): Որպես զոհաբերություն է ընկալվել նաև Աղձնիքում ընդունված մի ծես, երբ տղան աղբյուրի մոտ կոտրել է հավանած աղջկա սափորը ի նշան աղջկա հանդեպ համակրանքի և զոհաբերության սիրո հովանավոր Աստվածներին (Նահապետյան 2004ա, 116): Հարսանյաց ծիսաշարերում ամենատարածվածը եղել և շարունակում է մնալ ափսե կոտրելու ավանդույթը: Ափսեները կոտրում էին տան շեմին դրած՝ ոտքի հարվածով, կամ գետնին հարվածելով: Քանի որ տան մուտքերը համարվում էին տան ամենախոցելի հատվածը, որտեղ չարքերը ավելի հաճախ կարող էին վնասել (Թադևոսյան 2007, 174–175), ափսեները կոտրում էին որպեսզի չարքերին վախեց-

նեն և ապահովեն նորապսակների բարեհաջող մուտքը տուն: Շատ կարևոր էր, որ մուտքի մոտ կոտրվող սպասքը մեկ հարվածով կոտրվեր, որպես ուժի ցուցադրության դրսևորում: Երբեմն կոտրվելիք ափսեների դասավորությունը շեմին առանձին խորհուրդ է ունեցել, օրինակ հարսի ափսեն դրվում էր տան շեմից դեպի ներս, իսկ փեսայինը՝ դեպի դուրս, սա կապված էր «տղամարդը տան դրսի պատն է, իսկ կինը՝ ներսի» (Շագոյան 2011, 423) ժողովրդական ընկալումների հետ: Ի տարբերություն ժամանակակից ծեսի, ավանդութային հասարակությունում սպասքը կոտրում էին թե՛ աղջկա, թե՛ տղայի տան մուտքերի առջև: Այսօր պահպանվել է ափսե կոտրելու սովորույթը, բայց այն չի կապվում տան մուտքի, որպես անցումային վտանգավոր շեմի գաղափարի հետ, պարզապես բացատրվում է որպես նորապսակներին հաջողություն բերող, չարխափան գործողություն: Հանրության կողմից հարսանյաց հանդեսների ժամանակ ափսե կոտրելու սովորույթի այսպիսի մեկնաբանությունը հանգեցնում է նրան, որ հանդիպում ենք դեպքերի, երբ ափսեները կոտրվում են եկեղեցիների բակերում կամ հարսանյաց հանդիսությունների սրահներում:

Գամիրքում տան կտուրներից ներքև նետում էին ընդեղենով լի կավանոթներ, որպեսզի մուտքի առջև կոտրվի և պարունակությունը թափվի հարսի ոտքերի առջև՝ ապահովելով նորապսակների արգասավորությունը: Վերջին շրջանում ժամանակակից հարսանիքներում հանդիպող երևույթ է դարձել ափսեների փոխարեն զարդարված և քաղցրեղենով լի կավանոթների կոտրելը: Փեսայի մայրը անոթը պարեցնելով մոտեցնում է ամուսնացող զույգին և վերջիններս գետնին հարվածելով կոտրում են այն, որպես առատության խորհրդանիշ:

Հարսանյաց ավանդական ծիսաշարերում գդալը և շերեփը ևս ծիսականացվել են: Ընտանեկան հարստության և բարօրության խորհրդանիշ գդալը Նոր Բայազետում կիրառվել է որպես հարսանիքի հրավիրատոմս և յուրաքանչյուր ոք, ով ընդունում էր հրավերը մեկ փայտե գդալ էր նվեր ստանում: Նվիրած գդալների քանակով հաշվում էին նաև հյուրերի քանակը: Հարսի հայրական տնից հաճախ «գողանում» էին գդալ և շերեփ, որպեսզի հարսը տնտեսող և հաջողակ լինի (Լալայան 1910ա, 16; Լալայան 1910բ, 25): Հարսանեկան խաղիկիներում հանդիպում ենք մի դրվագի, որտեղ հարսնացուն երգի միջոցով խնդրում է մորը, որպեսզի վերջինս կոտրի իր գդալը և նետի այգին՝ ի նշան հայրական օջախից բաժանումի.

Դըգալըս կոյրեցեք, մարիկ,
Բախճան նետրեցեք. (Վարդանյան 2013, 44)

Բորչալուի պատմազգագրական շրջանում մուտքի մոտ փեսան հարսի հայրական տնից գողացած գդալը կոտրում էր՝ աղջկան յուրային դարձնելու համար:

Շերեփը տան կնոջ իշխանության խորհրդանիշն էր համարվում, և այդ է պատճառը, որ Աղձնիքի հովտային շրջաններում փեսայի մայրը տան շեմին նորահարսի ձեռքին հաց ու շերեփ է դրել, որպես տանտիկնության փոխանցման նշան: Հարսանեկան կատակ երգերում էլ կան տողեր, որոնցում շերեփը ներկայացվում է որպես իշխանության խորհրդանիշ, որտեղ հարսանքավորները կատակում են փեսայի մոր հետ, նրան զգուշացնելով, թե նորահարսը եկել է ձեռքից վերցնելու իշխանությունը՝ շերեփը:

Թագվորամեր դուրս արի,
Տես քեզի ինչ էնք բէրէլ՝
Գլօխ դմփօղ ենք բէրէլ,
Մազէր փէտփօղ էնք բէրէլ
Շերեփն առնող էնք բէրէլ (Խաչատրյան 2014, 34):

Կապված մշակութային առանձնահատկություններից հարսի տնից «գողացվող» սպասքի տեսակները տարբեր էին լինում: Օրինակ համշենահայերը՝ բաժակ, որը կոտրում էին փեսայի տան մուտքի առջև, աղձնիքահայերը՝ պուտուկի խուփ, որպեսզի հարսը չխոսկան լինի: Հարսի չխոսկանության հետ է կապված նաև փեսայի մոր կողմից մեղրով լի գդալը հարսի բերանում հակառակ ուղղությամբ դնելու սովորույթը: Այս սովորույթում հակառակ ուղղությամբ օգտագործվող գդալը նույնականացվում է լեզուն խուփի տակ դնելու պատկերավոր երևույթի հետ, ինչը միտված է հարսին հնազանդ դարձնելուն:

Զույգ գդալի, որպես ամուսնացող զույգի միության խորհուրդը ընդգծվել է ամուսնահարսանեկան ծիսաշարի որոշ դրվագներում և պահպանվել է նաև այսօր: Մուսալեռցիների ավանդույթի համաձայն աղջկա մայրը փեսային պնակի մեջ զույգ գդալներ է նվիրել, որպես միասնության խորհրդանիշ (Շագոյան 2011, 308): Պահպանելով անցյալի մշակութային հիմքը, այսօր փայտի գեղարվեստական փորագրությամբ զբաղվող վարպետները փորձ են անում իրենց աշխատանքներում վերարականգնել մշակութային մոռացված ավանդույթները: Ասվածի լավ օրինակ է գդալի երկու ծայրերը շղթայակապ «Ամուսնություն» կոչվող փայտե գդալները, որոնք պահպանում են գդալի, որպես բարօրության և զույգ թվի, որպես միության գաղափարը: Այդպիսի գդալների նմուշները ցուցադրվում են Փայտարվեստի թանգարանում և վաճառվում են հուշանվերային տաղավարներում: Ժամանակակից հարսանեկան ծեսում հանդիպվող երևույթ է նաև որպես տարոսիկներ բաժանվող փայտե գդալները, որոնց վրա ըստ պատվիրատուի ցանկության փորագրվում են հարսանիքի ամսաթիվը և նորապսակների անվան առաջնատառերը:

Նախահարսանեկան ծիսաշարի ամենախորհրդանշային և կարևոր փուլերից մեկը ալուրմաղեքի կամ հացթխման արարողությունն էր, որի ժամանակ օգտագործվող հացթխման պարագաները խիստ ծիսականացված էին: Գողթան գավառում ալյուր մաղող կինն իր մաղն էր պարեցնում, խոհարարուհին շերեփը, հացթուխը հացառն ու ակիշը (Լալայան 1905, 124): Ալյուրը մաղելու համար օգտագործվող մաղը մեր նախնիների պատկերացումներում համարվել է չարխափան, կապված նրա շրջանաձև և ցանցկեն կառուցվածքով: Ձավախքում մաղով հարսանիքի հրավեր էին կատարում: Մոկսում, երբ ըստ ավանդույթի բացակայել են հարսն ու փեսան, նրանց հագուստներից դրել են մաղի մեջ և քահանան օրհնության կարգ է կատարել: «Հարսանիքիդ մաղով ջուր կկրեմ» արտահայտությունը երբեմն լսում կամ օտագործում ենք, ինչը փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություն է և որևէ մեկի համար անհնարինն անելու իմաստն ունի: Ժամանակակից հարսանեկան ծեսում այս արտահայտությունը ուղղակիորեն սկսվել է բեմականացվել, երբ փեսայի երիտասարդ ընկերները մաղով ջուր են կրում հարսա-

նիքի ժամանակ: Իհարկե այս երևույթի մեջ մաղը չի գործածվում որպես չարխափան, այլ փորձ է արվում ասացվածքի բեմականացված տեսարանով զվարճություն մտցնել արարողության ընթացքի մեջ:

Հարսանեկան ծիսաշարերի տրամաբանական հաջորդականությունն են համարվում ծնունդն ու մանկատածությունը, ինչը ավանդութային հասարակությունում իրենից ներկայացրել է տարբեր ծիսապաշտամունքային գործողությունների հաջորդականություն, որոնցից որոշները կապված են եղել սպասքի հետ: Ազգագրագետ Վ.Բդոյանը կավանոթի խորհուրդը կապում է պտղաբերության խորհրդի հետ և բոլորովին պատահական չէ, որ XX դարի սկզբներին Հայաստանի որոշ շրջաններում թրծված, բայց չօգտագործված կճուճը համարվել է կնոջ երկունքի հովանավոր (Բդոյան 1986, 60) և ծնդաբերության ժամանակ կճուճի օգնությանը դիմելը մեկնաբանվել է որպես հայցում պտղաբերության աստվածուհուն:

Կապված մաղի չարխափան նշանակության հետ ծնդյան ծեսում հանդիպում ենք սովորույթի, երբ ծնդկանի կողքին շրջած մաղ էին դնում, հավատալով, որ չարքերը չեն կարող անցնել մաղի անցքերից, իսկ հղի կնոջը առհասարակ արգելված էր մաղ օգտագործել, որպեսզի երեխայի մաշկը մաղի անցքերի պես ցանցկեն չլիներ (Նահապետյան 2004բ, 177–178): Քավորի բացակայության պարագայում երեխային կնքում էին մաղի վրա (Գեղամյան 2015, 358): Հիվանդ երեխային դնում էին մաղի մեջ, ման տալիս, որպեսզի հիվանդությունները մաղվեն (Հարությունյան 2006, 14) :

Նախկինում սպասքի օգտագործման հետ կապված գործել են արգելքներ և որոշները դեռ շարունակվում են կիրառվել մինչև հիմա: Օրինակ ամուսնու ափսեից կինը իրավունք չուներ ուտելու, համարվում էր սրբապղծություն, հացը դանակով չէին կիսում, արգելված էր տան դանակը ուրիշին տալը: Սպասքը ոչ մաքուր կամ հարամված էին համարում, երբ սխալմամբ լվացքաջուր էին լցնում կամ մուկ էր ընկնում մեջը, այսպիսի ամանները կամ կոտրում էին կամ էլ մոխրաջրով լվանալուց ու խնկարկելուց հետո նորից օգտագործում (Լիսիցյան 1969, 174):

Սպասք կոտրելը՝ որպես բաժանումի խորհրդանիշ կիրառվել է նաև թաղման ծեսում, երբ ննջեցյալի գերեզմանաթմբի վրա հիվանդը լվացվում էր, ապա կոտրում էին կավե սափորը՝ ասելով. «առ հիվանդությունդ, տուր առողջությունս», կամ ննջեցյալին տանից դուրս հանելիս հետևից կավե ամաններն էին նետում և ջարդում՝ ասելով՝ երթալդ լինի գալդ չլինի (Харатян 1989, 36): Թաղման ծեսում որոշակի արգելքներ ևս կային կապված սպասքի օգտագործման հետ: Տավուշի մարզում հանգուցյալի մարմինը լվանալու համար աղբյուրից կժով ջուր բերելիս արգելված էր մինչև տուն հասնելը կուժը գետնին դնելը (Харатян 1989, 261), իսկ Ձավախքի պատմազգագրական շրջանում ընդունված չէր հանգուցյալի տանը գդալ օգտագործելը, քանի որ հավատում էին, թե դժբախտությունը կարող է փոխանցվել իրենց և եկեղեցին հատուկ գդալներ էր բաժանում հոգեհացի մասնակիցներին (Լալայան 1897, 314):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԴՈՅԱՆ 1986 – Բդոյան Վ., Հայկական աղամաններ, Երևան, «Սովետական գրող», 1986:

ԳԵՂԱՄՅԱՆ 2015 – Գեղամյան Ա., Ծեսը, ծիսակարգը և սովորույթը, որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ, Լրաբեր հասարակական գիտությունների 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2015, 353–360 :

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 2007 – Թադևոսյան Ա., Դարբինը հայոց ծիսակարգում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2007:

ԼԱԼԱՅԱՆ 1905 – Լալայան Ե., Գողթն գավառ, Թիֆլիս, «Հերմէս», 1905:

ԼԱԼԱՅԱՆ 1910 – Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ, Թիֆլիս, «Էլեկտրաշարժ», 1910:

ԼԱԼԱՅԱՆ 1897 – Լալայան Ե., Ձավախք, Թիֆլիս, «Ռօտինեանցի», 1897:

ԼԻՍԻՑՅԱՆ 1969 – Լիսիցյան Ս., Ջանգեզուրի հայերը, Երևան, «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն», 1969:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2014 – Խաչատրյան Ժ., Ծիսական պարը հայ հավատալիքների համատեքստում, Երևան, ՀՀ ԳԱԱ« Գիտություն», 2014:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2004 – Խաչատրյան Հ., Անահիտ աստվածուհու պաշտամունքի մի դրսևորում անտիկ Շիրակում, ՀՀ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ 7, Գյումրի, 2004, 43–48:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2006 – Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքները, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2006:

ՀԱԼԱՋՅԱՆ 1973 – Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն», 1973:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2004 – Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, «Երևանի պետական համալսարանի», 2004:

ՇԱԳՈՅԱՆ 2011 – Շագոյան Գ., Յոթ օր, յոթ գիշեր, Երևան, «Գիտություն», 2011:

ХАРАТЯН 1989 – Харатян З.,Культовые мотнвы цемейных обычаев и обрядов у армян, Ереван, Издательство на армянской ССР, 1989.

Mery Avetisyan

Memorial complex of Sardarapat battle national museum of Armenian etyhnography and history of the liberation struggle

meryavetisyan1984@gmail.com

CEREMONIAL WORSHIP FUNCTIN OF THE HOUSEHOLD UTENSILS IN THE LIFE TRANSITION RITUALS.

Keywords: Dishes, ritual, ritualization, historical-ethnographic stages, tradition, modernization, spoon, function, clay vessel.

The tableware ritualization phenomenon is quite topical in modern ritual process and it is directly related to the symbolism of the exact ritual. The basis of the ritualisation of applied tableware is first of all based on the widespread use of dishes in the household practice, as well as the interaction of folk beliefs. Due to the cultural peculiarities of different historical and ethnographic stages, the ritual forms of dishes are different.

The most common ritual in the modern wedding ceremony is the custom of breaking the plate in front of the entrance, closing the door with a sword or a knife by the bride's brother, which are modernized in the modern ritual due to the influence of imported cultures.

Мери Аветисян

Мемориальный комплекс сардарапатской битвы,
национальный музей этнографии и истории освободительной борьбы армян
meryavetisyan1984@gmail.com

РИТУАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ БЫТОВОЙ ПОСУДЫ В АРМЯНСКИХ ПЕРЕХОДНЫХ ОБРЯДАХ.

Ключевые слова: Утварь, обряд, ритуализация, обычай, этнографический регион, модернизация, ложка, функция, глиняный сосуд.

Ритуализация посуды в современном обряде достаточно актуально и непосредственно связанно с символикой данного обряда. В основе ритуального применения бытовой посуды в первую очередь лежит широкое применение посуды в быту, взаимодействие народных верований. В связи с культурными особенностями различных историко-этнографических регионов, формы ритуализации посуды разные. В современном свадебном обряде наиболее распространенным ритуальным применением посуды остаются обычаи ломать тарелку перед входом, закрывать порог двери мечом или ножом братом невесты, которые в современном ритуале, связанном с воздействием ввезенных культур, модернизируются.